



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

23.03.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 22/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի 04.03.2016թ. և «Սմայլ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքները և կից ներկայացված փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.03.2016թ. թիվ ԴՎԱ/637 գրությունը, կից ներկայացված փաստաթղթերը և դիրքորոշումը, ԳԲԽ-22/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 21.03.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն 04.03.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ բողոքի առարկան է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 26-ի թիվ 1.1 որոշումը, որով մերժվել է «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված Ընթացակարգին և հայտ է ներկայացրել հրավերով սահմանված 8-րդ չափաբաժնի մասով և ճանաչվել է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը, 6-րդ և 7-րդ հոդվածները և հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 26-ի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն մերժվել է «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության համաձայն «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն պետական բյուջեի նկատմամբ: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն 2016թ. հունվարի 11-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունեցել է գերավճար:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն գտնում է, որ ընկերության հայտը մերժելու որևէ իրավական հիմք առկա չէ, իսկ հայտը մերժելու արդյունքում սահմանափակվել է ընկերության մասնակցության իրավունքը:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշումը և դադարեցնել «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 26.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշումը:

2. «Սմայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Սմայլ» ՍՊԸ-ն 09.03.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ բողոքի առարկան է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի ոչ ավտոմատ ծանուցմանը կից ներկայացված ընկերության հայտը մերժելու մասի որոշումը:

«Սմայլ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում վկայակոչել է Օրենքի 5-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետի 1-ին ենթակետը, հայտնել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համար ընկերության համախառն եկամտի հանրագումարը կազմում է 739.460.401 ՀՀ

դրամ, ինչը հիմնավորող ապացույցներ են հանդիսանում 2013թ. շրջանառության հարկի հաշվարկները, 2014թ. և 2015թ. շահութահարկի հաշվարկները՝ կից ներկայացնելով համապատասխան հաշվետվությունները՝ տպված հարկային ծառայության էլեկտրոնային կայքից:

«Սմայլ» ՍՊԸ-ն գտնում է, որ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը չի համապատասխանում Օրենքի 5-րդ հոդվածի և Կարգի 67-րդ կետի պահանջներին և խնդրել է վերանայել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սմայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.03.2016թ. թիվ ԴՎԱ/637 գրությամբ «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի 04.03.2016թ. և «Սմայլ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացված բողոքների վերաբերյալ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 04.03.2016թ. «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ի և «Հ.Ա.Ն.Ս Ֆուդ» ՍՊԸ-ի հետ կնքվել են գնման պայմանագրեր, իսկ բողոքը պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 11.03.2016թ.: Պատվիրատուն վերոհիշյալ գրությանը կից ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ԳԲԽ-22/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 21.03.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի 04.03.2016թ. և «Սմայլ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքները մերժել:

5. ԳԲԽ-22/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-22/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սմայլ» ՍՊԸ-ն 10.01.2016թ. և «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն 11.01.2016թ. ներկայացրել են հայտ:

3. «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (11.01.2016թ.) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

4. «Սմայլ» ՍՊԸ-ն ներկայացված հայտի թիվ 3.3 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

5. Պատվիրատուն 15.01.2016թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների՝ նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Սմայլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.) համախառն եկամտի հանրագումարը կազմել է 350.853.141 ՀՀ դրամ, իսկ «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ որոշվել է մերժել «ՎԱԲԱ»

և «Սմայլ» ՍՊԸ-ների հայտերը, մասնավորապես, «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ «Սմայլ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

8. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից **04.03.2016թ.** Ընթացակարգի 1-7 չափաբաժինների մասով «Հ.Ա.Ն.Ս. Ֆուդ» ՍՊԸ-ի, իսկ 8-10 չափաբաժինների մասով «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ի հետ կնքվել են համապատասխանաբար՝ ՇՀԱՊՁԲ-7/17-2 և ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրերով պայմանագրեր, ինչի վերաբերյալ www.gnumner.am կայքում 07.03.2016թ. հրապարակվել է «ՇՀԱՊՁԲ-7/17-1,2» ծածկագրով կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը:

9. «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն **04.03.2016թ.**, իսկ «Սմայլ» ՍՊԸ-ն **09.03.2016թ.** գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել են բողոքներ:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի 04.03.2016թ. և «Սմայլ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, **գնահատող հանձնաժողովի** և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և **որոշումները**:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ **նախքան պայմանագրի կնքումը** բողոքարկելու:

պատվիրատուի և **գնահատող հանձնաժողովի որոշումները** գնումների բողոքարկման խորհրդին:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն 04.03.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել բողոք՝ խնդրելով դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի **գնահատող հանձնաժողովի** կողմից «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 26.01.2016թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշումը:

«Սմայլ» ՍՊԸ-ն 09.03.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել բողոք՝ խնդրելով վերանայել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի **գնահատող հանձնաժողովի** կողմից «Սմայլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.03.2016թ. թիվ ԴՎԱ/637 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի արդյունքում 04.03.2016թ. «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ի և «Հ.Ա.Ն.Ս Ֆուդ» ՍՊԸ-ի հետ կնքվել են գնման պայմանագրեր, ինչպես նաև www.gnumner.am կայքում 07.03.2016թ. հրապարակվել է «ՇՀԱՊՁԲ-7/17-1,2» ծածկագրով կնքված պայմանագրերի մասին հայտարարություն:

Այսպիսով, Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ՝ **նախքան պայմանագրի կնքումը**, մինչդեռ «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն և «Սմայլ» ՍՊԸ-ն գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքներով խնդրել են դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումներ՝ Պատվիրատուի և «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ի, ինչպես նաև Պատվիրատուի և «Հ.Ա.Ն.Ս Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 04.03.2016թ. կնքված գնման պայմանագրերի պայմաններում, ուստի Խորհուրդը գտնում է, որ նման պահանջներով բողոքներ ներկայացնելը ուղղակիորեն հակասում է Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պայմաններին:

Բացի այդ, մինչև Խորհրդի կողմից սույն որոշումը ընդունելը «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհավաստի վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով չունենալու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ի 04.03.2016թ. և «Սմայլ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝



Արթուր Բաղդասարյան



Ռաֆիկ Հակոբյան